

Ջորամասի ուղերձ

Սիրելի՛ հայրենակիցներ
Պարոնա՛յք սպաներ, սերժանտներ, զինվորներ պաշտպաններ
հայոց երկրի:

2014 թվականին պահպանվեց խաղաղությունը, որովհետև
Հայաստանի ու Արցախի սահմաններն անառիկ, անթափանց պահեց
հայոց բանակը:

Մեր հերոսական սպաներն ու զինվորները արժանի հակահարված
տվեցին հակառակորդի բոլոր ոտնձգություններին և խափանեցին
նրանց բոլոր նենգ ծրագրերը:

Հայոց բանակը 2014 թվականի մարտական պատրաստության,
մարտական պատրաստականության ավելի բարձր մակարդակի
հասավ:

Հաղթանակած բանակն է՝ մեր երկրի ու պետության հզոր պաշտպանն
ու հարատևման գրավականը: Նրա հզորությունն է զսպում՝ մեր
հակառակորդին ու հայ ժողովրդին հնարավորություն ընձեռում ապրելու
խաղաղ ու շինարար կյանքով:

Ամանորյա բարեմաղթանքների ժամանակ հիշենք մեր երկրի
կամավորական հերոսներին, ովքեր նորաստեղծ հայոց բանակի հետ 6
տարի հերոսական մաքառման ու սեփական կյանքի գնով կերտեցին
արցախյան հաղթանակը՝ արժևորելով այսօրվա մեր կյանքն ու
խաղաղությունը:

Գլուխ ենք խոնարհում մեր զոհված մարտական ընկերների անմահ
սիրանքի ու պայծառ հիշատակի առջև:

Հպարտությամբ փառաբանում ենք մեր հաղթանակած ու օրեցօր
հզորացող հայոց բանակին և այն՝ հերոսներին, ովքեր այսօր էլ իրենց
կյանքի նպատակն են հայտարարել ծառայությունը հայրենիքին:

Մի ողջ ժողովուրդ հարգանքով ու վստահությամբ է լցված Հայաստանի
անդորրը պահպանող, մարտական հենակետերում հերթապահություն
իրականացնող զինվորների, ենթասպաների և սպաների նկատմամբ:

Հայ ժողովրդի պատմական ընթացքը հավերժ է՝ քանի դեռ սահմանին
կանգնած եք դուք՝ հանուն հայրենիքի ու ժողովրդի ծառայության
պատրաստ հայ զինվորների:

Շնորհավորում եմ հայոց բանակի բոլոր զինծառայողների Ամանորն ու
Սուրբ ծնունդը:

